ՊԱՐՍԿԱՀԱՅՔ

ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՅՈԲԵԼԵԱՆԸ ՍԱԼՄԱՍՏՈՒՄ

Սալմաստ, 22 նոյեմբերի

Թէև քիչ ուշ, բայց վերջապէս Սալմաստն էլ կատարեց Մեծ յոբելեանը նոյեմբերի 21 ին։

Յոբելեանական հանդէսը տեղի ունեցաւ Հաֆթվանում, որպէս կենդրոնական գիւղում։ Առաւօտեան, Սալմաստի ամեն գիւղերից, ուր դպրոցներ կան, աշակերտ-աշակերտուհիները իրենց ուսուցիչների առաջնորդութեամբ և բազմաթիւ ժողովրդի ուղեկցութեամբ՝ դրօշակներով, դհոլ-զուռնայով, երգելով ու պարելով դէպի Հաֆթվան ուղղուեցին։ Առ. ժ. 11-ին Հաֆթվանի դպրոցի ընդարձակ բակը արդէն լիքն էր անհագին բազմութեամբ։ Պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարուեց բակում։

Հոգեհանգստին յաջորդեց հանդիսաւոր թափօրը գիւղի փողոցներով։ Գիւղերից եկած «օխտ ձեռք» դհոլ-զուռնան միասին թնդացնում էր օդը և հազարաւոր բազմութիւնը, ժպիտ ու խինդ երեսին ամբողջ գիւղը շրջան կատարելուց յետոյ, վերադարձաւ դպրոցի բակը, որտեղից բազմաթիւ խմբերի վերածուելով ցրիւ եկաւ տները հաֆթվանցիների հիւրասիրութիւնը վայելելու։

Կարգադրիչ մասնախումբը առանձին հրաւիրագրերով կամ պատգամաւորութիւններով հրաւիրել էր ռուս ու պարսիկ բարձրաստիճան պաշտօնեաներին, կաթոլիկ, բողոքական և օրթոդոքս միսիաներին, որոնցից հանդիսին ներկայանալու բարեհաճել էին՝ Դիլմանի ռուս գնդապետի կողմից կոմանդիր Թէոդոր Բամբէլչ և հայազգի մի սպայ, «Պորտ» ընկերութեան այստեղի ներկայացուցիչներից Մս. Փիթմըն և ուրիշ հայ քարոզիչներ։ Պարսիկներից ոչ ոք ներկայ չէր, նրանց Մուհարեմի սգի պատճառով։ Ի պատիւ յարգելի հիւրերի բանկետ էր պատրաստուել, որին մասնակցեցին մօտ 40 անձինք։ Բազմաթիւ կենացներ առաջարկուեցին՝ Թագաւոր Կայսրի, ռուս զօրքի, Կաթողիկոսի և այլն։

Բանկետից յետոյ սկսուեց դպրոցական հանդէսը։ Անհագին ընդարձակ թատերասրահում ասեղ գցելու տեղ չկար, այնպէս որ շատերը ստիպուած եղան դրսում անկացնել։ Հանդէսը կազմուած էր աւուր պատշաճի երգերից, արտասանութիւններից ու ճառախօսութիւններից, կար և նուագածութիւն։ Կարդացուեց հ. առաջնորդի ուղարկած յորդոր-նամակը, ուղղուած Սալմաստի հայութեան։ Ժողովրդին ցրուեցին կոչեր հազարաւոր օրինակներով Մեծ-Տօնի առթիւ։

Դպրոցական հանդէսից յետոյ սկսուեց հրավառութիւն, դհոլ-զուռնան և ժողովրդական պարերը դարձեալ սկսուեցին։ Մինչև ժամը 11-ը դպրոցի բակում համաժողովրդական խանդավառ ու սրտալի խրախճան էր կատարւում։ Օտարազգի հիւրերը մինչև վերջը մընացին։

Այսպէս Սալմաստն էլ իր ազգային պարտականութիւնը կատարեց դէպի Մեծ-Յոբելեանը։ Մօտ 20 տարուայ ընթացքի մէջ, որ մենք այս գաւառում ենք, յիրաւի, նոյեմբերի 21-ի տօնակատարութեան պէս բազմամարդ, երկարատև ու ժողովրդական շանթալից որև է հանդիսակատարութիւն չենք տեսել։ Մեծ-Տօնին Մեծ Մարդկանց— Սահակին և Մեսրոպին արժանի էլ մեծ ուրախութիւն արուեց, իսկ եթէ եղանակը նպաստաւոր լինէր, հարկաւ, աւելի փառաւոր պիտի անցնէր և աւելի բազմամարդ կը լինէր։

Օտար գիւղացիները, աշակերտութիւնը և ուսուցչութիւնը Հաֆթվանում, ինչպէս որ պէտքն է, հիւրասիրուելուց ու գիշերելուց յետոյ, առաւօտեան միևնոյն ձևով, դրօշակներով, դհոլ-զուռնայով վերադարձան իրենց գիւղերը։

Հանդէսի աջողութիւնը պարտական ենք տեսուչ պ. Գուլօեանին ուսուցիչների և Գործակ. Խորհրդի հետ միասին, որոնք աշխատանք չխնայեցին այդ բանի համար։

Սալմաստի ծխական խորհուրդների և ուսուցիչների խառը ժողովը վճռել է, որ յօգուտ Սալմաստի դպրոցական ֆոնդի մի հանգանակութիւն սկսել ամբողջ գաւառում։ Արդէն հանգանակիչ մասնախումբը ընտրուած է և շուտով գործի է անցնելու։

Վ. Պատրիկեան